

Գլաուկոմայի կլինիկական ուղեցույց

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցի նպատակն է մշակել և տրամադրել մասնագիտական և կազմակերպչական գործառույթների համալիր՝ գլաուկոմայով պացիենտ պացիենտներին վարող բժշկական թիմի համար: Այն չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտությունները անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Ուղեցույցը տրամադրում է արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել գլաուկոմայով տառապող պացիենտների բուժման արդյունքները ներառյալ կյանքի որակը:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել “ICO Guidelines for Glaucoma Eye Care” (<http://www.icoph.org/downloads/ICOGlaucomaGuidelines.pdf>) և AAO American Academy of Ophthalmology Preferred Practice Pattern® Guidelines (<https://www.aao.org/about-preferred-practice-patterns>) միջազգային ուղեցույցների նյութերը: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման GRADE 2 համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցների համացանցի (Scottish Intergollegiate Guideline Network – SIGN) ապացույցների դասակարգումը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի ակնաբույժների միության կողմից (արձանագրությունը կցվում է):

Ուղեցույցը նախատեսված է հիմնականում ակնաբույժների ,որոշ առումներով նաև ընտանեկան բժիշկների, մանկաբույժների ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա Ուղեցույցում լուսաբանվել են գլաուկոմայի սահմանումների, համաճարակաբանության, ռիսկի գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, պահպանողակն և վիրահատական բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է մոտ 10 խորոհուրդ: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները:

Հեղևություններ

Բազմաբնագավառ մոտեցումը և ապացուցողական խորհուրդներին հետևելը գլաուկոմայով տառապող պացիենտների ելքերի բարելավման բանալիներն են: Տեղայնացված բուժական գործելակարգերի և ընթացակարգերի կիրառումը պետք է ձգտի հասնել պացիենտների բուժման ելքերի չափելի բարելավումների:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցեր ,գլաուկոմա, ներակնային ճնշում, փեսաներվի սկավառակ, փեսադաշտ, “թիրախային ՆԱԾ”, կյանքի որակ, անվերադարձ կորուրթյուն :

Պատասխանատու համակարգող

ՀՀԱՆ գլխավոր ակնաբույժ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ակնաբուժության արմիոնի վարիչ, Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի տնօրեն ,բ.գ.դ.,պրոֆ. Ա.Ս.Մալայան:

Աշխատանքային խմբի անդամներ

-Ոսկանյան Լ.Ա. բ.գ.թ., Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի գլաուկոմայի բաժանմունքի վարիչ , Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ակնաբուժության արմիոնի դոցենտ,

-Պապոյան Վ.Ս., Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի գլաուկոմայի բաժանմունքի բժիշկ-օրդինատոր,

-Օգանովա Գ.Ա., Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի գլաուկոմայի բաժանմունքի բժիշկ-օրդինատոր:

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին (հայտարարագրերը կցվում են): Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոջ այնդամաների ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց

աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես առաջնային բուժօգնության օղակում, այնպես էլ մասնագիտացված կլինիկաներում:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Համաճարակաբանություն

Պացիենտների հետազոտման կարգը

Դասակարգում

Բնածին գլաուկոմա

Առաջնային բաց անկյուն գլաուկոմա

Ռիսկի գործոններ

Առաջնային փակ անկյուն գլաուկոմա

Երկրորդային գլաուկոմա

Գրականության ցանկ

Հավելված. Ապացույցների որակի դասակարգում (GRADE համակարգ)

Հապավումներ

ՆԱՃ՝ ներակնային ճնշում

ԲԱԳ՝ բաց անկյուն գլաուկոմա

ՓԱԳ՝ փակ անկյուն գլաուկոմա

ՏՆՍ՝ տեսողական նյարդի սկավառակ

ԱԲԱԳ՝ առաջնային բաց անկյուն գլաուկոմա

ԱՓԱԳ՝ առաջնային փակ անկյուն գլաուկոմա

ՆՃԲԱԳ՝ նորմալ ճնշումով բաց անկյուն գլաուկոմա

ԱԽԱ՝ առաջային խցիկի անկյուն

ԱԼՏ՝ արգոն լազերային տրաբեկուլոպլաստիկա

ԱԼՏ՝ սելեկտիվ լազերային տրաբեկուլոպլաստիկա

ՕԿՏ՝ օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա (OCT)

ՍՏԷ+բ/ի՝ սինուստրաբեկուլէկտոմիա + բազալ իրիդեկտոմիա

GRADE (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation)՝
Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման
համակարգը

SIGN՝ (Scottish Intercollegiate Guideline Network) Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի
կլինիկական ուղեցուցյերի համացանց

ICO (International Council of Ophthalmology)՝ Միջազգային Ակնաբուժական
Հանդես

AAO (American Academy of Ophthalmology)՝ Ամերիկյան Ակնաբուժական
Ակադեմիա

Նախաբան

Գլաուկոման հիվանդություն է, որն ախտահարում է տեսողական նյարդը և բերում անդառնալի կորուսյան: Առավելապես տարածված են գլաուկոմայի 2 ձևերը՝ բաց և փակ անկյուն: Փակ և բաց անկյուն գլաուկոմաների ժամանակ տեսողության նվազման հիմնական գործոնը դա բարձր ներակնային ճնշումն է: Այդ իսկ

պատճառով բուժման առանցքը համարվում է ներոհիշյալ գործոնի վրա ազդելը: Էպիդեմիոլոգիական և կլինիկական փորձաքնությունները ցույց են տվել, որ ներակնային ճնշման (ՆԱՃ) օպտիմալ հսկողությունը թույլ է տալիս նվազեցնել հիվանդության առաջխաղացումը^[1-25]: Գլաուկոմայով պացիենտների կյանքի որակը ըկնում է, ազդում վերջիններիս ֆիզիկական, էմոցիոնալ և սոցիալական վիճակի վրա: Ցանկացած ակնային հետազոտության ժամանակ պետք է բացառել գլաուկոմա հիվանդությունը, քանզի մեծամասամբ այն ընթանում է առանց գանգատների: Հիվանդության ձևերի տարբերակումը համարվում է հիմնական բուժման հայեցակետում, քանզի ամեն տեսակը ունի իր առանձնահատուկ մոտեցումը հիվանդության վարման և բուժման մեջ: Պացիենտների մեծամասնությունը անտեղյակ է գլաուկոմա հիվանդության մասին և դիմում են բժշկի արդեն իսկ ունենալով տեսողության զգալի վատացում: Բուժման տակտիկայի մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում ճիշտ ախտորոշումը, ինչպես նաև հիվանդության ստադիայի և ստաբիլության ճշգրիտ գնահատումը: Միայն ճիշտ ախտորոշումից հետո է հնարավոր ընտրել համապատասխան բուժման մեթոդը՝ կոնսերվատիվ, լազերային թե վիրահատական:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից: Տեղայնացման սկզբնաղբյուրներ է հանդիսացել “*ICO Guidelines for Glaucoma Eye Care*” և *AAO American Academy of Ophthalmology Preferred Practice Pattern® Guidelines* միջազգային ուղեցույցների նյութերը: Օգտագործվել են նաև Cochrane library, MEDLINE, և UpToDate առցանց տվյալների բազաները: Բանալի բառերի օգնությամբ կատարվել է բազմաբնագավառ, համակարգված գրականության որոնում (2008-2016թթ.) հավելյալ կատարելով համապատասխան հրապարակումների գրականության ցանկերի սկրինինգ: Յուրաքանչյուր որոնողական ռազմավարության նպատակն էր հայտնաբերել պատահական բաշխմամբ վերահսկավող փորձարկումներ (ՊԲՎՓ), ոչ-ՊԲՎԹ և համակարգային վերանայումներ, որոնք անդրադառնում են որոշակի գիտական հարցադրումներին:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացած ուղեցույցում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման Grade 2 համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցերի համացանցի (Scottish Intergollegiate Guideline Network - SIGN) ապացույցների դասակարգումը:

Տեղայնացման աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս:

Փաստաթուղթը նախատեսված է ակնաբույժների, ընտանեկան բժիշկների և առողջապահության կազմակերպիչների համար: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

1. **Հիվանդության ախտորոշումը, ընթացքը, վարման տակտիկան, բուժման մեխանիզմները պետք է քննարկվեն պացիենտի հետ:**

(I +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ գլաուկոմայով պացիենտների վարման տակտիկայում շատ կարևոր է հիվանդության ընթացքի, ախտորոշման, բուժման ընթացքի, բուժման մեխանիզմների քննարկումը պացիենտի հետ[28]: Շատ մարդիկ, ում մոտ հայտնաբերվում է ներակնային բարձր

ճնշում, կարող են դրա հետ կապված բավական նյարդային դառնալ, չնայած որ նրանց տեսողությունը դեռ բավական լավ է: Պարզապես իմանալ, որ ունես ներակնային բարձր ճնշում և, հետևաբար, զարգացող գլաուկոմայի բարձր ռիսկային խմբի մեջ ես, կարող է պատճառ դառնալ անհանգստանալու տեսողության հետ կապված նույնիսկ աննշան խանգարման համար՝ չնայած որ այն կարող է կապ չունենալ գլաուկոմայի հետ:

Այս ամենը բերում է նրան, որ պացիենտները ովքեր գիտեն, որ գործ ունեն այնպիսի հիվանդության հետ, որը չբուժվելու հանգամանքում անվերադարձ բերում է կուրության, հոգեբանորեն դարձնում են խիստ ընկճված: Պացիենտներին անհրաժեշտ է զգուշացնել, որ սույն հիվանդության դեպքում նրանք մշտապես պետք է գտնվեն բժշկի հսկողության տակ: Սա առավել կարևոր է դարձնում պացիենտ-բժիշկ հոգեբանական կապը:

2. Բոլոր պացիենտների մոտ պետք է կատարել ներակնային ճնշման(ՆԱՃ) չափում և արձանագրել ՆԱՃ-ի նորմայից ցանկացած շեղում [1-25]:

(1 +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Փակ և բաց անկյուն գլաուկոմաների ժամանակ տեսողության նվազման հիմնական ռիսկի գործոնը դա բարձր ներակնային ճնշումն է: Այդ իսկ պատճառով բուժման առանցքը համարվում է ներոհիշյալ գործոնի վրա ազդելը: Էպիդիմիոլոգիական և կլինիկական փորձաքնությունները ցույց են տվել, որ ներակնային ճնշման (ՆԱՃ) օպտիմալ հսկողությունը թույլ է տալիս նվազեցնել հիվանդության առաջխաղացումը[1-25]: Ներկայիս բոլոր բուժման մեթոդների հիմքում ընկած է ՆԱՃ-ի իջեցումը:

3. **Բոլոր պացիենտների մոտ պետք է կատարել տեսողական նյարդի սկավառակի (ՏՆՍ) վիճակի գնահատում, և օֆթալմոսկոպիայի միջոցով արձանագրել տեսողական նյարդի նորմայից ցանկացած շեղում [75,76,77]:**

(I +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Քանզի գլաուկոման շատ դեփքերում ընթանում է առանց արտահայտված կլինիկական նշանների և շատ դեպքերում հիվանդները բժշկի են դիմում արդեն իսկ ունենալով զարգացած գլաուկոմա, ապա շատ է կարևորվում ցանկացած ակնային հետազոտության ժամանակ կատարել տեսանյարդի վիճակի գնահատում[75]:

4. **Այն պացիենտները, որոնց մոտ կասկածվում է գլաուկոման պետք է պարտադիր ենթարկվեն տեսադաշտի քննության և պերիմետրիայի միջոցով արձանագրվի տեսադաշտի նորմայից ցանկացած շեղում [78-82]: Բուժման տակտիկան փոխելուց անհրաժեշտ է կրկնել տեսադաշտի հետազոտությունը(բարձր որակ, խիստ ցուցում)[48-50]:**

(II+, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Արդեն վաղուց տեսադաշտի հետազոտությունը համարվում է ոսկի ստանդարտ գլաուկոմայի ախտորոշման համար[83]: Քանզի գլաուկոմայի ժամանակ տեսադաշտում առաջանում են գլաուկոմային խիստ բնորոշ տեսադաշտի փոփոխություններ, ապա այս մեթոդը մինչ այսոր մնում է անփոխարինելի գլաուկոմայի ախտորոշման մեջ[78-82]:

5. **Այն պացիենտները, որոնց մոտ հիմնական ախտորոշիչ մեթոդները կատարելուց հետո կրկին կասկածվում է գլաուկոման պետք է պարտադիր ենթարկվեն օպտիկական կոհերենտ տոնոգրաֆիայի (RNFL and ONH analysis) [84-87]:**

(III, անբավարար որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Օպտիկական կոնտրեռնտ տոմոգրաֆիան(ՕԿՏ) անհրաժեշտ է կատարել երբ առկա է ախտորոշման իրականացման խիստ դժվարացում[84]: Այս պարագայում ՕԿՏ-ն ունի մեծ կարևորություն, քանզի գլաուկոմայի սկզբնական փուլում ախտորոշումը ունի և բուժական և ֆինանսական կարևորություն: Այս մեթոդը պետք է իրականացնել միայն այն դեպքում, երբ ՆԱՃ-ի չափման, ՏՆՍ – հետազոտման և տեսադաշտի ստուսման միջոցով անհնարին է լինում գլաուկոմայի ախտորոշումը[84-87]:

6. **Բուժման ընթացքում անհատապես պետք է գնահատել և որոշել ամեն պացիենտի համար իր “թիրախային ՆԱՃ-ը”, որին պետք է ձգտել բուժման ընթացքում [88-90]:**

(III, անբավարար որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Երբ որոշում է կայացվում գլաուկոմայով պացիենտի բուժման վերաբերյալ, շատ կարևոր է հասնել մի այնպիսի ՆԱՃ-ի, որի դեպքում կա վիճակի կայունություն, տեսադաշտի ստաբիլություն, հիվանդի կյանքի որակի նորմալացում[90]: Այս պարագայում առավելապես կարևորվում է այսպես կոչված “թիրախային ՆԱՃ” տերմինը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ բուժումը սկսելուց առաջ ՆԱՃ-ի թիվը իջեցնելով 25% -ով գլաուկոմայի առաջխաղացումը մեծամասամբ կանխվում է [91-97]: Բուժման ընթացքում հնարավոր է “թիրախային ՆԱՃ”-ի փոփոխություն:

7. **Դեղորայքային բուժումը սկսելուց առաջ պետք է գնահատել տվյալ դեղի պացիենտի վրա բացասաբար անդրադառնալու ռիսկը[106-112]:**

(I+բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Քանզի գլաուկոմայով հիվանդ պացիենտները ստիպված են երկար ժամանակ ,որոշ դեպքերում նաև մինչ կյանքի վերջ օգտագործել հակագլաուկոմատոզ դեղորայք ,ապա շատ կարևոր է ,որ սույն դեղորայքը կամ դեղորայքները լինեն անվնաս պացիենտի համար: Պետք է տեղեկանալ պացիենտի այլ օրգան համակարգերի հիվանդությունների մասին: Գլուկոմայի բուժման պարագայում շատ կարևոր է ,որ պացիենտը կատարի նշված բուժումը[113-116]: Հարկ է նաև հիվանդին տեղեկացնել դեղորայքը կաթեցնելուց անմիջապես հետո աչքի ներսային անկյունը մատով սեղմելու մասին[117]:

- 8. Վիրահատական բուժումը պետք է կատարել ,երբ դեղորայքային կամ լազերային բուժումը անարդյունավետ է, կամ կա տեսանյարդի զգալի վնասում տեսադաշտի համապատասխան փոփոխություններով[118,119]:**
Կամ ի սկզբանե պարզ է, որ ՆԱՃ-ը հնարավոր չէ կարգավորել առանց վիրահատական միջամտության(ՆԱՃ-ը > 35 մմ.ս.ս): Այս ամենը չի վերաբերվում գլուկոմայի միկրոինվազիվ վիրահատություններին(ՄԻԳՎ):
(I +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Տրաբեկուլեկտոմիան՝ գլաուկոմայի վիրաբուժության այսպես կոչված ոսկե ստանդարտը, և գլաուկոմայի ֆիլտրացիայի այլ եղանակները շրջանցում են սկլերան՝ ֆիստուլայի միջոցով ստեղծելու դրենաժի (վիրափողակի) նոր հատված սկլերալ և կոնյուկտիվալ ծածկույթով: Երբեմն բժիշկը, որպես առաջին միջամտություն, խորհուրդ է տալիս վիրահատականը[118,119]: Դա նշանակում է, որ տեսանյարդի վիճակը և տեսողական օրգանի ֆունկցիաները այն աստիճան վատացած են, որ թույլ չեն տալիս

կատարել միջանկյալ միջամտություններ, քանի որ անհրաժեշտ ցածր ճնշումը հնարավոր է միայն վիրահատությունից հետո[119]: Հետվիրահատական սպիական պրոցեսներից խուսափելու համար ցուցված է օգտագործել հակաֆիբրոտիկ ագենտներ, ինչպիսին է օրինակ mitomycin –C –ն[120,121]: ՄԻԳՎ վիրահատությունները կարելի է կիրառել գլաուկոմայի սկզբնական փուլերում:

- 9. Անհրաժեշտ է հիշել, որ կատարակտի որոշ տեսակների(ուռճեցող) էքստրակցիան թույլ է տալիս նվազեցնել ներակնային ճնշումը [98-105]:**
Կիրառելի է երբ բացակայում է տեսանյարդի զգալի վնասումը:
(II+, միջին որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Տարբեր հեղինակների տվյալները վկայում են այն մասին, որ կատարակտի ֆակոէմուլսիֆիկացիան նպաստում է ՆԱՃ նվազեցմանը առանց զուգակցվող գլաուկոմայի[98-100]: Նաև կատարակտի էքստրակցիան կարող է զուգակցող փականկյուն գլաուկոմայով պացիենտների մոտ նպաստել ՆԱՃ ստաբիլիզացիային[100-103], այն դեպքում, երբ բացանկյուն գլաուկոմայի առկայության դեպքում հետվիրահատական հիպոտենզիվ էֆեկտը կարող է արտահայտված չլինել [104,105]: Եթե առկա է տեսանյարդի զգալի վնասում անհրաժեշտ է իրականացնել կոմբինացված վիրահատություն՝ կատարակտի էքստրակցիան գլաուկոմայի վիրահատության հետ զուգահեռ:

10. **Խորհուրդ է տրվում օգտագործել անվտանգության ընթացակարգեր, որպեսզի կանխվի հնարավոր վիրահատական միջամտությունը <<ոչ ճիշտ աչքին>>(այն աչքը, որը նախատեսված չէ վիրահատական միջամտության):**
(միջին որակ,խիստ ցուցում)

Հիմնավորում

Արտացոլում է էտապներ, որոնք իրականացվում են վիրահատությունից օրեր առաջ, վիրահատության օրը և երբ կատարվում է նախավիրահատական հաշվարկը, որպեսզի մինիմումի հասցվի կանխվող վիրահատական սխալների հաճախականությունը, ինչպիսիք են միջամտության կողմ(օրինակ <<ոչ ճիշտ աչքի>>) կամ վիրաբուժական միջամտությունը [122-127]: Մի քանի փուլերով պետք է կանխվի սխալ աչքի վիրահատման վտանգը:

Համաճարակաբանություն

Հիվանդության տարածվածությունը բավականին տատանվում է տարբեր էթնիկ և ռասայական խմբերում: Օրինակ արևմտյան երկրներում առավելապես տարածված է գլաուկոմայի բաց անկյուն ձևը իսկ արևելքում փակ անկյուն տարբերակը: Ամբողջ աշխարհում ԲԱԳ-ով տառապում են մոտ 45 մլն մարդ[26]: Առողջապահության բնագավառում գլաուկոման համարվում է մեծ բեռ ինչպես կլինիկական առումով ,այնպես էլ՝ ֆինանսական: 2010 թ-ին աշխարհում ունենալով մոտ 60.5 մլն գլաուկոմայով պացիենտ մարդ ակնկալվում է, որ 2020 թ-ին այդ թիվը կաճի՝ հասնելով մինչև 80 մլն-ը[27]: Հայաստանում 2014 թ.-ին գրանվել են 8996 գլաուկոմայով հիվանդ պացիենտներ, որոնցից 1714 առաջին անգամ ախտորոշված: 2015 թ.-ին գրանվել են 8530 պացիենտներ, որոնցից 1747 առաջին անգամ

ախտորոշված: 2016 թ.-ին գրանվել են 8801 պացիենտներ, որոնցից 1713 առաջին անգամ ախտորոշված:

Գլաուկոմայով պացիենտների հետազոտման կարգը

Անամնեզ

Նախ և առաջ պետք է հարցնել պացիենտի գանգատները, հատկապես ուշադրություն դարձնելով այն գանգատների վրա որոնք այս և այն կերպ կարող են կապ ունենալ գլաուկոմայի հետ՝ ցավ, կարմրածություն, տեսողության վատացում, ծիածանի օղերի առկայություն: Պետք է նշվի սիմպտոմների սկիզբը, տևողությունը, տեղադրությունը և ծանրության աստիճանը: Պետք է հարցնել գլաուկոմայով պացիենտ ազգակիցների առկայության մասին և կազմել մանրակրկիթ հիվանդության պատմություն: Հիվանդության ախտորոշումը, ընթացքը, վարման տակտիկան, բուժման մեխանիզմները պետք է քննարկվեն պացիենտի հետ(բարձր որակ,խիստ ցուցում)[28]:

Հիվանդության պատմության հարցերն են՝

- Հիմնական գանգատը
- Տարիք, սեռ, ռասայական պատկանելիություն, մասնագիտություն
- Ընտանեկան անամնեզ
- Այլ ակնային հիվանդություններ ներկայումս և անցյալում, գլաուկոմայի կապակցությամբ անցյալում տարած վիրահատությունները, վնասվածք
- Կորտիկոստերոիդների և այլ դեղորայքի օգտագործում
- Ալերգիա դեղերի նկատմամբ
- Ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործում
- Դիաբետի առկայություն
- Այլ օրգան համակարգերի հիվանդություններ
- Համակարգային հիվանդությունների առկայություն
- Հղիություն, մայրական կաթով կերակրում:

Առաջնային գննում – պացիենտի վիճակի գնահատումը հիմնականում հիմնվում է հետևյալ հետազոտությունների վրա[29]:

1. Տեսողության սրության ստուգում- օգտագործվում է մոտիկի և հեռվի տեսողությունը գնահատելու համար նախատեսված աղյուսակները, "փինհոլը", հարկ եղած դեպքում լուսազգացողության ճիշտ գնահատում:
2. Ռեֆրակցիա- օգտագործվում է ոսպնյակների հավաքածուն, ֆոտոպտեր, ավտոռեֆռակտոմետր
3. Բբային ռեակցիա- լույսի աղբյուր, "փեն-լայթ",
4. Առաջային հատվածի հետազոտում-բիոմիկրոսկոպ, կեռատոմետր, պախիմետր
5. Ներակնային ճնշման չափում(բարձր որակ, խիստ ցուցում) -Մակլակովի տոնոմետր, Գոլդմանի տոնոմետր, տոնոպեն, օրական տոնոմետրիա
6. Առաջային խցիկի հետազոտում-գոնիոսկոպիա (Գոլդմանի ,Յեյսի, Պոզների գոնիոլինզաներ), առաջային սեգմենտի օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա (ՕԿՏ), ուլտրաձայնային բիոմիկրոսկոպիա
7. Ակնահատակի մասնավորապես տեսողական նյարդի սկավարակի(ՏՆՍ) հետազոտում ուղիղ և հակադարձ օֆթալմոսկոպիայի միջոցով (միջին որակ, խիստ ցուցում)[30-47] ,բիրը կարելի է լայնացնել եթե անկյունը բաց է, ակնահատակի ֆոտոգրաֆիա,
8. Տեսադաշտի հետազոտում-պրոյեկցիոն պերիմետրիա, կոմպյուտերային պերիմետրիա (բարձր որակ, խիստ ցուցում):
9. Օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա(RNFL and ONH analysis)-անհրաժեշտ է կատարել երբ առկա է ախտորոշման իրականացման դժվարացում (անբավարար որակ, խիստ ցուցում):

Դասակարգում

Ըստ զարգացման աստիճանի`

- Գլաուկոմայի կասկած- ՏՆՍ էքսկավացիան <0.4 , առկա է տեսադաշտի, ՏՆՍ-ի կամ նեյռոթեոինալ օղակի որևէ մեկի վնասման կասկած, ներակնային ճնշումը հիմնականում նորմալ է:

- Վաղ կամ սկսվող- ՏՆՍ էքսկավացիան $<0,7$ (վերտիկալ էքսկավացիա),արյունազոռում ՏՆՍ-ի շրջանում(splinter),ՏՆՍ-ի էքսկավացիայի ասիմետրիա երկու աչքում,նեյրոբետինալ օղի բարակում,տեսադաշտում քթային կողմից նեղացում,կույր կետի լայնացում:
- Զարգացած- ՏՆՍ-ի էքսկավացիան $0.7-0.9$,նեյրոբետինալ շերտի դիֆուզ ախտահարում,տեսադաշտում արտահայտված փոփոխություններ:**Տեսողության սրությունը կարող է լինել 1.0** ,
- Բաց թողնված կամ ուշացած- ՏՆՍ-ի էքսկավացիան >0.9 ,նեյրոբետինալ շերտի սուբատրոֆիա,տեսադաշտը, խողովակաձև,տեսողության սրությունը հիմնականում խիստ նվազած,
- Բացարձակ գլաուկոմա- տեսողության սրությունը բացակայում է (0) ,ՏՆՍ- ատրոֆիա,անվերադարձ կուրություն:Ուժեղ ցավի ժամանակ կարելի է իրականացնել “Ցիդոֆավիր”-ի ինտրավիտրեալ ներարկում, սակայն վերջինիս ազդեցությունը դեռ վերջնական գիտական ամփափում չի ստացել և գտնվում է գիտական հետազոտությունների փուլում[51] (անբավարար որակ ,թույլ ցուցում)(զգուշացնել ակնագնդի չափերի փոքրացման ,ժամանակավոր հնարավոր ցավերի նաև հնարավոր աչքի գույնի փոփոխության մասին),ծայրահեղ դեպքում էվիսցերացիա:

Ըստ կլինիկական վիճակի՝

Աղյուսակ 1

Դասակարգում	Հետազոտության արդյունքներ	Բուժում	Հետևել
Կոմպենսացված (Ստաբիլ գլաուկոմա)	ՆԱՃ-ի,ՏՆՍ-ի,տեսադաշտի ստաբիլ վիճակ	Շարձակել նույն սխեմայով	~4 ամիսը մեկ -1 տարում
Չկոմպենսացված (Ոչ ստաբիլ)	Իջեցնել ՆԱՃ-ը և/կամ	ՆԱՃ-ը հավելյալ	1-4 ամիս(կախված

գլաուկոմա)	Նվազեցնել SՆՍ-ի վնասման վտանգը և/կամ Նվազեցնել տեսադաշտի նեղացման վտանգը	իջեցնել \geq 25%-ով	հիվանդության ծանրությունից, ռիսկի գործոններից, առկա ռեսուրսներից)
------------	--	-----------------------	---

Ըստ անկյան պատկերի

- **Քաց անկյուն**- իր հերթին կարող է լինել՝
 - ա) լայն (IV)- գոնիոսկոպով երևում են բոլոր գոտիները՝ Շվալբեյի գիծը, տրաբեկուլյար ապարատը Շլեմյան խողովակով, սկլերալ ելունը, թարթչային մարմինը և ծիածանաթաղանթի արմատը,
 - բ) միջին լայնության(III) - առաջային խցիկի անկյունը բաց է մինչև սկլերալ ելունը
 - գ) նեղ(I,II) -երևում է միայն տրաբեկուլյարի սկիզբը:
- **Փակ անկյուն** –գոնիոսկոպիկ անկյան կոմպոնենտները չեն երևում,կասկածի ժամանակ նշանակել առաջային հատվածի տոմոգրաֆիա(Visante OCT):

Անկյան ձևի ճիշտ որոշումն ունի կարևոր նշանակություն, քանի որ և կլինիկական ընթացքը, և բուժման մոտեցումը տարբեր են յուրաքանչյուր ձևի համար:

Ըստ ներակնային ճնշման մակարդակի

- կոմպենսացված (A), երբ ՆԱՃ-ն ըստ Մակլակովի ցածր է 28 մմ ս.ս.-ից
- սուբկոմպենսացված (B), երբ ՆԱՃ=28-33 մմ ս.ս.,
- չկոմպենսացված (C), երբ ՆԱՃ-ն 34 մմ ս.ս.-ից բարձր է:

Ըստ ծագման`

1. **Քնածին**,
2. **Առաջնային**(բաց և փակ անկյուն)
3. **Երկրորդային**:

1. **Քնածին**

- 1.1. *Առաջնային քնածին*-ծնված օրվանից մինչև >2 տարեկան

- Նեոնատալ գլաուկոմա (0-1 ամիս)
- Ինֆանտիլ գլաուկոմա(>1 մինչև 24 ամիս)
- Ուշ սկսվող կամ ուշ հայտնաբերված (>2 տարեկանից)

Էթիոլոգիա

Անկյան դիզգենեզը տեղի է ունենում տրաբեկուլյար համակարգի ոչ լիարժեք զարգացման հետևանքով մինչ ծնվելը կամ ծնվելուց հետո: Սպեցիֆիկ քրոմոսոմալ փոփոխությունները հայտնաբերվում են 1p36 և 2q21 քրոմոսոմներում:

Կլինիկական նշաններ

Ֆոտոֆոբիա, արցունքահոսություն, բլեֆարոսպազմ: Ակնագունդը չափերով ավելի մեծ ի համեմատ նույն տարիքի առողջ աչքի: Եղջրենու տրամագիծը կյանքի 1-ին տարում սովորաբար > 10.5մմ ծնվելու ժամանակ և >12մմ-ից: Ակնագնդի առաջահետին առանցքի երկարությունը ծնվելու ժամանակ >20 մմ և >22մմ կյանքի առաջին 1 տարում: Կարող է զուգորդվել դեսցեմենտյան թաղանթի պատռվածքներով, Հաաբսի ստրիաներով: Ծանր դեպքում ակնագունդը չափերով խիստ մեծանում է՝ “բուֆթալմ”: Ներակնային ճնշման չափումը, օֆթալմոսկոպիան կատարվում է ընդհանուր անզգայացման տակ:

Բուժումը

Դասական մոտեցումը դա գոնիոտոմիան է կամ տրաբեկուլէկտոմիան: Գոնիոտոմիան կատարվում է կամ 180 կամ 360 աստիճանով և հաճախ կարիք է լինում կրկնել դա: Դեղորայքային բուժումը քիչ էֆեկտիվ է և հիմնականում նշանակվում է վիրահատության նախապատրաստման փուլում: Կլինիկապես ուշ արտահայտվող դեպքերը սովորաբար ակնագնդի չափերի զգալի մեծացման չեն բերում և առավել բարենպաստ արդյունքներ են գրանցվում վիրահատությունից հետո:

1.2 *Վաղ յուվենիլ* > 2 տարեկանից մինչև սեռահասուն տարիքը:

Էթիոլոգիկ և պաթոֆիզիոլոգիկ տվյալներով նման է առաջնային բնածին գլաուկոմային տարբերությամբ,որ՝

- Ակնագնդի արտահայտված մեծացում չկա
- Բնածին ակնային անոմալիաների և սինդրոմների բացակայություն
- Ասիմպտոմ է ընթանում մինչև տեսադաշտի զգալի նվազումը

Անկյունը բաց է ,բարձրացած ՆԱՃ,ՏՆՍ-ի և տեսադաշտի փոփոխությունները կախված են հիվանդության ստադիայից:

Բուժման մոտեցումը նույն է ինչ առաջնային բնածին գլաուկոմայի ժամանակ(գոնիոտոմիա կամ տրաբեկուլէկտոմիա):

1.3 *Առաջնային յուվենիլ գլաուկոմա* -սկսվում է սեռահասուն տարիքից:Կրում է ժառանգական բնույթ:

Նշաններ՝

- Ակնագնդի չափերի մեծացումը բացակայում է
- Ասիմպտոմ է ընթանում մինչև տեսադաշտի զգալի նվազում
- ՏՆՍ-ի գլաուկոմատոզ փոփոխություններ
- Տեսադաշտում գլաուկոմատոզ փոփոխություններ
- Անկյունը բաց է
- Բնածին կամ զարգացման անոմալիաները բացակայում են

Բուժումը

1. Նշանակվում են դեղորայքային բուժում ընտրվում են մաքսիմալ էֆեկտիվ և տանելի դեղորայքը կամ դեղորայքները
2. Լազերային տրաբեկուլոպլաստիկան հիմնականում էֆեկտիվ չի
3. Վիրահատական միջամտություններից առավել էֆեկտիվ է սինուստրաբեկուլէկտոմիան:

1.4 *Երկրորդային բնածին գլաուկոմա*

1.4.1 զուգակցված ակնային բնածին անոմալիաների հետ

- Աքսենֆելդ Ռիգերի անոմալիա
- Պետերսի անոմալիա
- Անոթաթաղանթի էկտրոպիոն
- Ծիածանաթաղանթի բնածին հիպոպլազիա
- Անիրիդիա
- Օտի նևուս
- Հետին պոլիմորֆոզ դիստրոֆիա
- Միկրոֆթալմիա
- Միկրոկորնեա

1.4.2 զուգակցված ոչ ակնային բնածին անոմալիաների հետ

- Քրոմոսոմալ անոմալիաներ օրինակ Դաունի սինդրոմը
- Շարակցական հյուսվածքի անոմալիաներ
 - ա) Մարֆանի սինդրոմ
 - բ) Վեյլ-Մարկեզանի սինդրոմ
 - գ) Սթիկլերի սինդրոմ
- Նյութապոխանակման խանգարումներ
 - ա) հոմոցիստենուրիա
 - բ) Լոուի սինդրոմ
 - գ) մուկոպոլիսախարիդոզ
- Ֆակոմատոզներ
 - ա) նեյրոֆիբրոմատոզ
 - բ) Ստյուիթ-Վեբերի սինդրոմ
 - գ) Կլիպել-Տրենուանայ-Վեբեր սինդրոմ
 - դ) Ռուբեշտեյն-Տաուբի սինդրոմ
 - ե) բնածին կարմրախտ

1.4.3 զուգակցված ձեռքբերովի անոմալիաների հետ

- Ուվեիտներ
- Վնասվածք(անկյան ռեցեսիա, հիֆեմա)
- Ուռուցքներ
- Ռետինոպաթիաներ

Բուժման տակտիկան ընտրելը համարվում է բավականին դժվարին: Դեղորայքային բուժումը հիմնականում նշանակվում է մինչ վիրահատական տակտիկայի որոշումը: Հիմնականում կատարվում է գոնիոտոմիա, տրաբեկուլոտոմիա կամ ֆիլտրացիոն վիրահատություն(US \pm բ/ի): Երբեմն անհրաժեշտ է լինում վիրահատությունը կրկնել:

2. Առաջնային բաց անկյուն գլաուկոմա (ԱԲԱԳ)

Համարվում է քրոնիկ, պրոգրեսիվող հիվանդություն, որը չբուժելու դեպքում բերում է գանգլիոնար բջիջների պրոգրեսիվ մահվան և տեսադաշտի պրոգրեսիվ վատացման: Այն համարվում է անդարնալի կուրության հիմնական պատճառներից մեկը: **Առաջնային գլաուկոման միշտ երկկողմանի պրոցես է, չնայած նրան, որ պրոցեսի սկիզբը տարբեր է ժամանակային առումով:** Հիմնականում այն տարածված է 50 տարեկան անց մարդկանց մոտ և տարիների ընթացքում վերջինիս առաջացման հավանականությունը նվազում է: Հիմնականում ԱԲԱԳ-ը և պսևդոբսֆոյատիվ բաց անկյուն գլաուկոման դիտվում է նույն կոնտեկստում և ունի նույն վարման և բուժման տակտիկան:

Ռիսկի գործոնները`

- Ներակնային ճնշում[52,1,53-56]-**այս գործոնը միակ փոփոխելի գործոնն է և բուժման ողջ տակտիկան ուղղված է նվազեցնել նշված գործոնի ազդեցությունը**, (բարձր որակ, խիստ ցուցում): Ապացուցված է, որ իջեցնելով ՆԱՃ-ը կարելի է լինում իջեցնել հիվանդության առաջխաղացման հավանականությունը
- Տարիք[1,57,2,58-61],
- Ռասայական պատկանելիություն-օրինակ աֆրոամերիկացիների մոտ առավել տարածված է ,քան կովկասցիների մոտ,

- Ընտանեկան անամնեզ[59,60-64]-աշխատություններ կան, որոնք ցույց են տալիս, որ գլաուկոմայի զարգացումը առավելապես հավանական է այն անձանց մոտ ովքեր ունեն գլաուկոմայով պացիենտ ազգակիցներ,
- Պսևդոէքսֆոլյատիվ սինդրոմ
- Եղջրենու կենտրենական հաստություն[1,2,65]-ապացուցված է, որ եղջրենու կենտրոնական հաստության ամեն 40 μm բարակեցման դեպքում գլաուկոմայի հավանականությունը մեծանում է,
- Միօպիա[63,72-74]-պարզված է, որ կարճատեսության դեպքում ($> 4\text{D}$) մոտ 2 անգամ ավելանում է գլաուկոմայով պացիենտանալու հավանականությունը
- Ակնային պերֆուզիոն ճնշում[64,66,67]-ցածր պերֆուզիոն ճնշումը ավելացնում է գլաուկոմայով պացիենտանալու հավանականությունը
- II տիպի շաքարային դիաբետ[68-71]

Նշանները

- Կլինիկական նշանները հիմնականում բացակայում են մինչև տեսադաշտի փոփոխությունների հայտնաբերումը կամ բաց թողնված դեպքում տեսողության անկումը
- Բարձր ներակնային ճնշում(առանց դեղորայքի կամ երբեմն նաև դեղորայքով)
- ՏՆՍ-ի էքսկավացիայի մեծացում (վերտիկալ էքսկավացիա)
- Տեսադաշտի յուրահատուկ փոփոխություններ- բնորոշ է տեսադաշտի նեղացումը քթային կողմից, և մինչև վերջին փուլերը դեռ պահպանվում է որոշակի տեսողություն քունքային կողմում:
- Գոնիոսկոպիկ անկյունը բաց է

2.1 Նորմալ ճնշումով բաց անկյուն գլաուկոմա (ՆՃԲԱԳ)

Ախտորոշվում է բացառման սկզբունքով, երբ առկա է անատոմիորեն բաց անկյուն գլաուկոմա, սակայն ճնշման թիվը գտնվում է նորմայի սահմաններում (≤ 24 մմ.ս.ս): Պաթոգենեզի մեջ առկա են բազմաթիվ տարակարծություններ: Առավելապես տարածված է 55 անց կանանց շրջանում և շատ հաճախ զուգորդվում են անոթային պաթոլոգիաների, միգրենի հետ: Քանզի ՆՃԲԱԳ-ն ախտորոշվում է բացառման սկզբունքով, ապա բուժումը պետք է սկսել, երբ առկա են

նշանակելի ռիսկի ֆակտորներ ,կամ երբ առկա է հիվանդության պոզիտիվ օբյեկտիվ նշաններ:

Բուժում

1. **Դեղորայքային** մոնոթերապիա կամ կոմբինացված թերապիա մի քանի դեղորայքային խմբերով

Հիմնական դեղորայքի խմբերն են`

- *Բետա- պաշարիչներ*, β -բլոկերները չեզոքացնում են β -ընկալիչներում կատեխոլամինների էֆեկտը, իջեցնում են ՆԱՃ-ն:Լինում են`

ա) ոչ սելեկտիվ ՝թիմոլոլ մալեաթ(0.1,0.25 և 0.5%)- հավասար չափով արգելակում են թարթչային մարմնում առկա β -1 և β -2 ընկալիչները: Ինչպես հայտնի է β -1 ընկալիչներ կան սրտամկանում, իսկ β -2` բրոնխներում:

բ)սելեկտիվ ՝բետաքսոլոլ(0.5%)-նվազեցնում են ներակնային հեղուկի արտադրությունը:

Չնշանակել սրտային անբավարարության,բրոնխոօքստրոկտիվ հիվանդությունների(բրոնխիալ ասթմա) ժամանակ,ներակնային ճնշումը նվազեցնում է մոտ 20-25 %-ով,

- *Պրոստագլանդինների անալոգներ*(տրավոպրոստ 0.004%,տաֆլուպրոստ 0.0015%,լատանոպրոստ 0.005%)- բարելավվում են ուվեոսկլերալ արտահոսքը, կապված այն բանի հետ, որ պրոստագլանդինները հանդիսանում են բորբոքային մեդիատորներ, նրանց զգուշությամբ են կիրառում առաջային հատվածի բորբոքումների ժամանակ,զգուշությամբ նշանակել նաև կամ չնշանակել կոնտակտային լինզաներ կրող պացիենտներին նաև պսևդոֆակիկ,աֆակիկ աչքերում, կողմնակի ազդեցություններից հայտնի են`

ա) հիպերեմիան,

բ)ծիածանաթաղանթի և կոպերի հիպերպիգմենտացիան,

գ)թարթիչների երկարումը,

դ) **պսևդոֆակիկ ,աֆակիկ աչքերում մակուլայի այտուցը**

տեսողության ՆԱՃ-ը նվազեցնում է մոտ 25-35%-ով:

- **Կարբոանհիդրազայի**
ինհիբիտորներ(դորզոլամիդ,բրինզոլամիդ)-նվազեցնում են հեղուկի արտադրությունը, Կարբոանհիդրազան ֆերմենտ է,որն առկա է նաև թարթչային էպիթելում: Նրա արգելակումը կասեցնում է նատրիումական և կալիումական միացությունների իոնային փոխանակությունը՝նվազեցնելով ներակնային հեղուկի արտադրությունը:Զգուշությամբ նշանակել կամ չնշանակել եղջրենու էնդոթելիալ բջիջների վնասման ժամանակ,երիկամային կամ լյարդի հիվանդությունների ժամանակ(հիպերբլորեմիկ ացիդոզ)ՆԱՃ-ը նվազեցնում է մոտ 20%
- **Ալֆա2** – *ազոնիստներ*(բրինոնիդին 0.2%,ալֆագան)- նվազեցնում են հեղուկի արտադրությունը, α -2-ազոնիստները խթանում են թարթչային մարմնի α -2 ընկալիչները, որոնց քանակությունն ավելի քիչ է, քան β -2 ընկալիչներինը, դրա համար էլ հիպոտենզիվ արդյունքն էլ ցածր է:զգուշությամբ նշանակել կամ չնշանակել հակադեպրեսանտներ օգտագործող(MAO ինհիբիտորներ) պացիենտներին,նաև երեխաներին:ՆԱՃ-ը նվազեցնում է մոտ 18-25%,
- Միոտիկներ, որոնք պարասիմպաթոմիմետիկ են: **Նշանակում են միայն փակ-անկյուն գլաուկոմաների ժամանակ**(խիստ ցուցում,բարձր որակ)խթանում են թարթչային մարմնի և բբի մուսկարինային ընկալիչները, որոնք բբի նեղացման միջոցով բացում են առաջային խցիկի անկյունը, դրանով նաև մուտքը դեպի դրենավորող համակարգ: Սրանց է պատկանում Pilocarpine-ը : Տեղային կողմնակի ազդեցություններն են՝ միոզ, միոպիզացիա, կատարակտոգենություն և այլն: Զգուշությամբ նշանակել կամ չնշանակել կարճատես աչքերում:
- **Կոմբինացված դեղեր**(թիմոլոլ մալեաթ + դորզոլամիդ,թիմոլոլ մալեաթ +տրավոպրոստ,թիմոլոլ մալեաթ +բրինոնիդին):

- Մեկ այլ խումբ են կազմում այսպես կոչված ապագայի դեղամիջոցները՝ նեյրոպրոտեկտորները՝ ապոպտոզը երկարացնող: Այսօր տեղային կիրառվող դեղամիջոցներից նեյրոպրոտեկտորային ազդեցություն ունեն՝ Brimonidine, Betaxolol:

Պացիենտները պետք է տեղեկացվեն դեղորայքի հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին(բարձր որակ,խիստ ցուցում):

2.Լազերային բուժում –

2.1. Լազերային տրաբեկուլոպլաստիկա –կիրառելի է միայն բաց-անկյուն գլաուկոմաների ժամանակ(խիստ ցուցում,բարձր որակ): Այս մեթոդը կարելի է դիտարկել որպես առաջնային մեթոդ կամ որպես դեղորայքային մեթոդի այլընտրանքային մոտեցում:Էությունը կայանում է նրանում, որ տրաբեկուլյար հատվածի վրա կատարվում են կետային լազերային կոագուլյացիաներ, որը մեծացնում է ջրային հեղուկի արտահոսքը և իջեցնում է ՆԱՃ-ն:

- Արգոն կամ դիոդային լազերային տրաբեկուլոպլաստիկա(ALT)
- Սելենկոպիլ լազերային տրաբեկուլոպլաստիկա (SLT)

Կիրառելի է, երբ՝

- ա) դեղորայքային բուժումը բավարար արդյունավետ չէ
- բ) որպես առաջնային միջոց,երբ ինչ ինչ պատճառով դեղորայքային բուժում չի նշանակվում:

Իրականացվում է տեղային անզգայացման տակ՝ գոնիասկոպի հսկողությամբ 180° կամ 360° :

Հետվիրահատական բարդությունները՝

- Որոշակի ժամանակ անց ՆԱՃ-ի բարձրացում
- Բորբոքում (հիմնականում նվազ արտահայտված)
- Առաջային սինեխիաներ(ALT –ից հետո)

Հետօպերատիվ հսկողություն-նշանակել տեղային ոչ-ստերոիդային կամ ստերոիդային հակաբորբոքային բուժում 3-4× 4-7 օր:Սահմանել ՆԱՃ-ի հետագա հսկողություն ,անհրաժեշտության դեպքում ավելացնել հիպոտենզիվ դեղորայք:ՆԱՃ-ը իջեցնում է մոտ 20-25%-ով:

2.2. YAG-լազերային իրիդեկտոմիա -կատարվում է միայն նեղ(մոտ $\leq 15^\circ$) կամ փակ անկյուն գլաուկոմաների դեպքում(բարձր որակ,խիստ ցուցում)՝ 2 աչքում ,YAG լազերի միջոցով տեղային անզգայացման տակ կատարվում է ծիածանաթաղանթի վրա հատում ժամը 12-ի շրջանում:Սկզբնական շրջանում հիմնականում թույլ է տալիս կանխել հիվանդության հետագա առաջխաղացումը և այդ շրջանում համարվում է հիմնական և առաջնային բուժման տակտիկայում:Նաև հիմնական բուժման միջոցն է փակ-անկյուն գլաուկոմայի նոպայի ժամանակ:Հիավանդները պետք է գտնվեն դինամիկ հսկողության տակ:

2.3 Լազերային իրիդոպլաստիկա-կատարվում է փակ-անկյուն գլաուկոմաների ժամանակ՝պլատո” կոմպոնենտի առկայության դեպքում(բարձր որակ,խիստ ցուցում), երբ անհրաժեշտություն կա իրիդոտոմիայից հետո լավացնել դեպի անկյուն տանող ճանապարհ՝ այդպիսով խուսափել հետագա հնարավոր առաջային սինեխեաներից:Տոտոկոագուլյացիայի համար հիմնականում օգտագործվում է արգոնային կամ դիոդային լազերային ճառագայթները:

3.Վիրահատական բուժում - Վիրահատություններն ուղղված են աչքից դեպի ընդհանուր անոթային համակարգ հեղուկի արտահոսքի համար հատուկ ուղիների ստեղծմանը: Նրանք կատարվում են այն ժամանակ, երբ դեղամիջոցները և լազերը չեն կարգավորում ճնշումը, երբ դրանք հակացուցված են կամ, երբ տեսանյարդի վիճակը պահանջում է ճնշման շատ ցածր մակարդակ:

Երբեմն բժիշկը, որպես առաջին միջամտություն, խորհուրդ է տալիս վիրահատականը: Դա նշանակում է, որ տեսանյարդի վիճակը և տեսողական օրգանի ֆունկցիաները այն աստիճան վատացած են, որ թույլ չեն տալիս կատարել միջանկյալ միջամտություններ, քանի որ անհրաժեշտ ցածր ճնշումը հնարավոր է միայն վիրահատությունից հետո:

ԱԲԱԳ-ի ժամանակ իրականացվող հիմնական վիրահատություններն են՝

3.1.**Սինուս-տրաբեկուլեկտոմիա**- ԱԲԱԳ-ի դեպքում ամենատարածվածն է կարելի է ասել գլաուկոմայի վիրահատական բուժման մեջ համարվում է ոսկի ստանդարտ(բարձր որակ,խիստ ցուցում):Վիրահատական միջամտությունն է, որի ժամանակ ձևավորում են ֆիստուլա (առաջային խցիկից ջրային հեղուկի

արտահոսքը դեպի սուբտեննյան տարածություն ապահովելու համար)՝ ՆԱՃ-ն իջեցնելու համար:

Ցուցումներն են՝

- Երբ դեղորայքային կամ լազերային բուժումը անարդյունավետ է եղել
- Բուժման այլ մեթոդները ինչ ինչ պատճառով անհնար է իրականացնել(դեղորայքային ալերգիա կամ այլ կողմնակի ազդեցություններ,պացիենտը չի ցանկանում մշտապես դեղորայք օգտագործել և այլն)
- Երբ այլ մեթոդները ի սկզբանե անարդյունավետ են լինելու(տեսադաշտի զգալի կորուստ,ՏՆՍ էքսկավացիա ≥ 0.9 ,OCT-ի տվյալներով առկա է նյարդաթելերի արտահայտված վնասում):
- Երբ ՆԱՃ-ը ի սկզբանե այնքան բարձր է ,որ կոնսերվատիվ կամ լազերային բուժման մեթոդները անհնարին կլինեն այն իջեցնելու ցանկալի թվերի:

Պացիենտները պետք է զգուշացվեն,որ հետվիրահատական ցանկացած անցանկալի վիճակների մասին անհրաժեշտ է ահազանգել բժշկին(անբավարար որակ,խիստ ցուցում):

3.2. **Առաջային խցիկի շունտավորում**-կիրառելի է հիմնականում բաց անկյուն գլաուկոմաների ժամանակ,հատուկ միկրոշունտեր են ,որոնք իմպլանտացվում են տրաբեկուլյար համակարգի մեջ՝ստեղծելով կապ ԱԽԱ անկյան և Շլեմյան խողովակի հետ(օրինակ Glaukos ֆիրմայի G1,G2 տիպի շունտեր),կամ իմպլանտացվում են սուպրախորիոիդալ տարածության մեջ՝ ԱԽԱ անկյունը կապելով սուպրախորիոիդալ տարածության հետ(Glaukos ֆիրմայի G3 շունտ):

Ցուցումներն են՝

- Պացիենտը չի ցանկանում դեղորայք կաթեցնել
- Բուժման այլ մեթոդները ինչ ինչ պատճառով անհնար է իրականացնել(դեղորայքային ալերգիա կամ այլ կողմնակի ազդեցություններ,պացիենտը չի ցանկանում մշտապես դեղորայք օգտագործել և այլն)

- Տերմինալ կամ բացարձակ գլաուկոմայի ժամանակ ,երբ պացիենտը չի ցանկանում կամ հնարավորություն չունի ավելի ծավալուն վիրահատական միջամտության:

3.3. **Դրենավորող համակարգերի պատվաստում**, ինչպիսին է, օրինակ, Ահմեդ-գլաուկոմա-փականը, որոնք պատվաստվում են պերիսկլերալ տարածություն՝ դրենավորող խողովակը առաջային խցիկ մտցնելով: **Իրականացվում է, երբ այս կամ այն պատճառով սովորական վիրահատությունն անարդյունավետ է՝**

- Նեովասկուլյար գլաուկոմա
- Ուլթալ գլաումոա
- Ռեֆրակտեր գլաուկոմա:

3.4 **Կոմբինացված վիրահատություններ**-մեկ վիրահատության ընթացքում կատարվում է կատարակտայի և գլաուկոմայի համատեղ վիրահատություն:

Ցուցումներն են՝

- Պացիենտի ցանկությունը միաժամանակ իրականացնելու երկու վիրահատություն(ֆինանս,ժամանակ)
- Դեպքեր ,երբ ի սկզբանե հավանական է,որ կատարակտայի հեռացումը ինքնին կազդի ներակնային ճնշման բարելավման վրա:
- Երբ ինքնին գլաուկոմայի վիրահատությունը կխորացնի արդեն իսկ առկա ոսպնյակի պղտորումը՝ նվազեցնելոց արդեն իսկ վատ տեսողությունը:

Կոմբինացված վիրահատությունը իրականացնելուց առաջ անհրաժեշտ է մանրամասն քննարկել պացիենտի հետ բոլոր հնարավոր ներ և հետվիրահատական բարդությունների մասին ,տեղեկացնել ռեաբիլիտացիոն շրջանի երկարեցման մասին:Միակ աչք ունեցող պացիենտների դեպքում առավել զգուշորեն մոտենալ հարցին ,ունենալ համապատասխան փորձ և ունակություն:

3.Առաջնային փակ անկյուն գլաուկոմա (ԱՓԱԳ)

ԱՓԱԳ-ն ախտորոշվում է ,երբ գոնիոսկոպիկ անկյունը փակ է անկյան դիմաց առկա է իրիդոտրաբեկուլյար շքում(ԻՇ) կամ առաջային կպումներ՝

առանց

նախորդող

պատճառների(ուվեիտ,տրավմա,նեովասկուլյարիզացիա):

Ռիսկի գործոններ`

- Տարիք-50 անց,
- Սեռ- պացիենտանում են հիմնականում իգական սեռի անձինք,
- Ռասա- հիմնականում արևելքում է տարածված
- Ժառանգություն

Դասակարգում

3.1.Փակ անկյան գլաուկոմայի կասկած` իրիդոտրաբեկուլյար շքումն առկա է երկու կամ ավել կվադրատում,ՆԱՃ-ը նորմալ է,բացակայում են ՏՆՍ-ի ախտահարման նշանները,տեսադաշտը նորմայի մեջ է:

Բուժման տակտիկան որոշվում է անհատապես,որպես այդպիսին լազերային վիրահատության ուղղակի ցուցում չկա,կշեռքին դրվում է լազերային վիրահատության ռիսկը և փակ անկյան ռիսկը պացիենտի համար:Կատարում են լազերային իրիդեկտոմիա կամ պլատո կոմպոնենտի դեպքում լազերային իրիդոպլաստիկա:

3.2.Առաջային փակ անկյուն գլաուկոմա` առկա է իրիդոտրաբեկուլյար շքում կամ առաջային կպումներ համարյա ողջ երկայնքով,ՆԱՃ-ը կարող է նորմայից բարձր լինել ,սակայն չկա ՏՆՍ-ի վնասման նշաններ:

Մեխանիզմներն են`

- **Բբային բլոկ`** կազմում է ընդհանուր մեխանիզմների 75% - ը,իրենից ներկայացնում է ֆիզիոլոգիական ֆենոմեն ,երբ հետին խցիկում ճնշումը բարձրանում է ի համեմատ առաջային խցիկի և արդյունքում ծիածանաթաղանթը առաջ է գալիս և փակում անկյունը:Առաջային խցիկը ծանծաղ:ՆԱՃ-ը հիմնականում նորմայից բարձր:Կա ուղղակի ցուցում լազերային իրիդոտոմիայի:
- **Ծիածանաթաղանթի պլափո կոմպոնենտ**-մեխանիզմների մի խումբ է ,երբ ծիածանաթաղանթի և թարթչամարմնի անատոմիկան ոչ ստանդարտ տարբերակների դեպքում ծիածանաթաղանթը իր հիմքի շրջանում առաջ է գալիս

դեպի տրաբեկուլյար համակարգ: Կա ուղղակի ցուցում լազերային իրիդեկտոմիայի զուգակցված լազերային իրիդոպլաստիկայով

- *Ներակնային հեղուկի արտահոսքի ուղղության խախտում*(*aqueous misdirection syndrome*) չարորակ գլաուկոմա-մեխանիզմի հիմքում ընկած է թարթչամարմնի ելունների սխալ դասավորության պատճառով ներակնային հեղուկը արտադրվում է ոսպնյակի հետին հատված՝ ապակենման մարմին, որի հետևանքով դիաֆրագման առաջ է գալիս փակելով անկյունը: Հիմնականում լինում է փոքր առաջահետին առանցք ունեցող աչքերում (≤ 21 մմ), բարձր աստիճանի հիպերմետրոպիկ աչքերում: Իրիդոտոմիայից հետո միոտիկների նշանակումը ավելի է բարձրացնում ՆԱՃ-ը և հակացուցված է, իսկ ցիկլոպլեգիկ դեղերը ընդհակարակը իջեցնում են ՆԱՃ-ը (inverse reaction): Որոշ դեպքերում նշանակվում է ոսպնյակի հեռացում

Նշաններ

- իրիդոտրաբեկուլյար շքում կամ առաջային սինեխիաներ տարբեր աստիճաններում
- ՆԱՃ-ը հիմնականում ≤ 28 մմ.ս.ս
- Տեսողության սրությունը հիմնականում նորմալի մեջ
- ՏՆՍ-ի էքսկավացիան նորմալ կամ փոփոխված
- Տեսադաշտում գլաուկոմատոզ փոփոխություններ կապված զարգացման ստադիայից
- Ցավը հիմնականում բացակայում է, կարող է լինել թույլ դիսկոմֆորտ
- Երբեմն տեսադաշտում ծիածանի օղերի առկայություն

Բուժում- հիմնական բուժումը դա լազերային իրիդոտոմիան է

ա) Դեղորայքային –միայն դեղորայքային բուժումը առանց լազերի հակացուցված է, կիրառվում է՝

- Միոտիկներ-pilocarpine 1, կամ 2%
- Բետա-պաշարիչներ
- Կարբոանհիդրազայի ինհիբիտորներ-

բ) Լազերային

- Լազերային իրիդոտոմիա՝ բբային բլուկի դեպքում
- Լազերային իրիդոտոմիա+լազերային իրիդոպլաստիկա՝ պլատո կոմպոնենտի ժամանակ

գ) Վիրահատական

- Վիրահատական տրաբեկուլեկտոմիա
- Կատարակտայի ֆակոէմուլսիֆիկացիա եթե անկյան փակ լինելը երկրորդային ձևով պայմանավորված է ոսպնյակի ուռչեցմամբ:
- Սինուս-տրաբեկուլեկտոմիա

3.3 Փակ անկյուն գլաուկոմայի սուր նոպա-

Նշաններ

- իրիդոտրաբեկուլյար շբում 360 °,
- ՆԱՃ-ը >28 մմ.ս.ս.հիմնականում 40-50 մմ.ս.ս
